

1.2.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2006թ. հունվար-ապրիլին, ընթացիկ գներով, բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7638 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով կազմել է 59.0 մլրդ.դրամ, որը 2005թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը գերազանցել է 3.6%-ով: 2006թ. ապրիլի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է 2006թ. մարտի 106.1 %-ը:

Հանրապետությունում ընթանում են զարմանացան մշակաբույսերի ցանքի աշխատանքները: 2006թ. մայիսի 1-ի դրությամբ կատարվել է 34832 հեկտար զարմանացան մշակաբույսերի ցանք 2005թ. նույն ժամանակաշրջանի 46356 հեկտարի դիմաց, որից հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր՝ 26457 հեկտար (33605), կարտոֆիլ՝ 4701 հեկտար (8383), բանջարանոցային մշակաբույսեր՝ 2474 հեկտար (3079), բոստանային մշակաբույսեր՝ 497 հեկտար (559) և կերային մշակաբույսեր՝ 529 հեկտար (672 հեկտարի դիմաց):

Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում մարզերի կտրվածքով

(հաշվարկային տվյալներ)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) ¹ , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2006թ. հունվար-ապրիլ	2006թ. հունվար-ապրիլը 2005թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %	2006թ. հունվար-ապրիլ	2006թ. հունվար-ապրիլը 2005թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %	2006թ. հունվար-ապրիլ	2006թ. հունվար-ապրիլը 2005թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
ք.Երևան	0.1	100.0	0.9	100.0	7.9	50.3
Արագածոտն	3.0	115.4	16.9	111.2	5.4	80.6
Արարատ	2.4	114.3	10.9	111.2	8.5	81.0
Արմավիր	3.1	100.0	9.4	110.6	7.9	76.7
Գեղարքունիք	4.3	113.2	26.0	110.6	8.6	81.1
Լոռի	2.8	116.7	17.1	110.3	5.7	85.1
Կոտայք	2.8	112.0	15.3	110.9	59.7	79.9
Շիրակ	3.8	115.2	21.8	110.7	8.0	80.8
Սյունիք	2.1	110.5	12.4	110.7	3.1	81.6
Վայոց ձոր	1.0	125.0	5.5	110.0	2.7	75.0
Տավուշ	2.1	116.7	10.0	109.9	4.3	81.1
Ընդամենը ՀՀ	27.5	112.7	146.2	110.6	121.8	77.2

2006թ. հունվար-ապրիլին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, անասնաբուծական հիմնական մթերքի արտադրության ծավալները՝ բացառությամբ ձվի ծավալից, ավելացել են: Այսպես՝ սպանդի համար իրացված անասնի և թռչնի ծավալը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի մակարդակը 3.1 հազ. տոննայով, կամ 12.7 %-ով, կաթինը՝ 14.0 հազ. տոննայով կամ 10.6 %-ով:

¹ Ներառյալ ներքին սպառումը: